ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. ապրիլի 21-ից 22-ը Լիտվայի Հանրապետություն (ք. Վիլնյուս) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**
   Գնել Սանոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Լիտվայի Հանրապետություն (ք. Վիլնյուս), 2024թ. ապրիլի 21-ից 22-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Հրավերը ստացվել է Լիտվայի Հանրապետության էներգետիկայի նախարար Դաինյուս Կրեյվիսի կողմից:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   - Էներգետիկայի բնագավառում երկկողմ համագործակցության հարցերի քննարկում,
   - Ծանոթություն Եվրոպայում իր մեծությամբ առաջին՝ 200 ՄՎտ ընդհանուր հզորությամբ էներգիայի պահեստավորման համակարգին,
   - Էներգետիկ անվտանգության, ածխածնային չեզոքության և կայուն էներգետիկ համակարգ հաստատելու լիտվական փորձի ուսումնասիրում:

6. **Քննարկված թեմաները.**

Այցի ընթացքում քննարկվել են էներգետիկ ոլորտում հնարավոր համագործակցության վերաբերյալ հարցեր, վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հետ կապված խնդիրներն ու մարտահրավերները, արևային և քամու էներգիայի օգտագործման հետ կապված հարցեր:

Քննարկվել են «Իգնալինա» ԱԷԿ-ի փակման հետևանքով Լիտվայում էլեկտրաէներգետիկական ճգնաժամը և դրա հաղթահարման ուղիները, ինչպես նաև ԱԷԿ-ի փակումից հետո միջուկային թափոնների պահեստավորման եղանակները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Այցի ընթացքում հանդիպել եմ Լիտվայի Հանրապետության էներգետիկայի նախարար Դաինյուս Կրեյվիսի հետ: Հանդիպմանը մասնակցել է նաև Լիտվայի

Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Արա Մարգարյանը:

Լիտվայի էներգետիկայի նախարար Դաինյուս Կրեյվիսը ներկայացրել է ժամանակակից աշխարհաքաղաքական մարտահրավերների պայմաններում ինքնաբավ էներգետիկ համակարգին անցնելու, ինչպես նաև էներգիայի կուտակիչ կայանների տեղադրման և գործարկման ոլորտում լիտվական փորձը:

Լիտվայի էներգետիկայի փոխնախարար Ալբինաս Զանանավիչյուսի ուղեկցմամբ այցելել եմ Վիլնյուսի Energy Cells-ի 200 մեգավատ (ՄՎտ) էներգիայի պահեստավորման կայանների համակարգ: Ամբողջ համակարգը բաղկացած է էներգիայի պահպանման 4 սարքերից՝ 50 ՄՎտ/50 ՄՎտ/ժ հզորությամբ, որը ապահովում է Լիտվայի էլեկտրաէներգետիկ համակարգի հուսալի շահագործումը: Այն ներկայումս Բալթյան երկրներում ամենամեծ, իսկ Եվրոպայում՝ իր տեսակի մեջ ամենախոշոր նախագծերից մեկը:

Տեղում ներկայացվել է պահեստավորման կայանի շինարարության և շահագործման մանրամասները, ծրագրի նպատակները և հեռանկարները, ինչպես նաև դրա իրագործելիության հնարավորությունները Հայաստանի համար:

8.<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>

Այցի շրջանակներում պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում մասնագիտական, փորձագիտական մակարդակում համագործակցել՝ լիտվական լավագույն փորձն ուսումնասիրելու նպատակով:

9. <u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>

Հաշվի առնելով Հայաստանի և Լիտվայի միջև երկկողմ օրակարգի ընդլայնումը և համագործակցության նոր ուղղությունների հեռանկարները ՏԿԵ իրավասության ոլորտում՝ առաջարկվել է հետևողականորեն շարունակել հայ-լիտվական էներգետիկ համագործակցության շրջանակներում տարվող աշխատանքները:

Կողմերը պայմանավորվել են նաև մշտական կապ ապահովել իրենց՝ էներգետիկայի ոլորտը համակարգող տեղակալների միջև՝ ձեռք բերված պայմանավորվածությունները կյանքի կոչելու նպատակով:

10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>

25.04.2024թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը — ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը — ՀՀ վարչապետի 10.04.2024թ. № 326-Ա որոշում

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) — Գնել Սանոսյան, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*) — Լիտվայի Հանրապետություն (Վիլնյուս)

4. Գործուղման վայրը — 21.04-22.04.2024թ.

5. Գործուղման ժամկետները — 2024թ. ՀՀ պետական բյուջե

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Գնել Սանոսյան*
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	***419534***
Գիշերավարձ /հյուրանոցային փաստաթուղթ/	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	87
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	36265
	Օրերի քանակը	1
	Ընդամենը (դրամ)	***36265***
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	66
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	27511
	Օրերի քանակը	2
	Ընդամենը (դրամ)	***55023***
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար	
	Մուտքի արտոնագրի վճար	
	Այլ ծախսեր (*նկարագրել*)	
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		***510822***

կուրսը 1€=416.84

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը: Ա.Երիցյան

23.04.2024թ.